



## S O R F O T U S O S U S S O

ԹԱՑԵՐԱԽԱՂ

Գ Ե Օ Տ Ե Ւ

Ա Ն Ձ Ի Ն Ֆ

ԱԼՖՈՆՍ ԵՐԿՐՈՐԴ, ԳԷՐՐԱՐԱՍՅԻ ՊՈւՔՍԸ  
ԼԵՕՆՈԲԻ ՓՕՆ ԷՍՏԻ, ՊՈւՔՍԻ ԲՄՐՐԸ (Իշխանուհի)։  
ԼԵՕՆՈԲԻ ՍԱՆՎԻՏԱԼԵ, ԿՈմսուհի Սկանդինավուհի։  
ՏՕՐՔՈՒՍՈ ՏԱՍՏՈ։  
ԱՆՏՈՆԻՕ ՄՌՈՆՏԻԿԱՏԻՆՈ, պետական բարձուղար։

Գործողութեան տեղը Բէլրիգուարդօ դաստակերտն է։

## Ա.Ո.Ջ.Զ.Ի. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա.Ո.Ջ.Զ.Ի. ՏԵՍԱԿ

Պարտէզը զարդարուած է վիպասան բանաստեղծների արձաններով։  
Բեմի աջակողմում գքած է Վ. իրդէլիսսի կնաքածանն, իսկ ձախակողմում՝  
Արքոստինը։

Իշխանանուհի, ԼԵՕՆՈԲԻ։

ԻՇԽԱՆԱՆՈՒՀԻ

Դու ինձ ժպտալով ես նայում, Լեօնորէ՛, և հայեացրդ-  
քեզ վրայ ես ձգում ու կրկին ժպտում, այդ ի՞նչ է նշանակում։  
Յայտնի՞ր ինձ, բարեկամիդ։ Կարծես թէ մտածմունքի մէջ ես։  
թէև գոհ ես երեսում։

## ԼԵՇՆՈՐԵ

Այս, իշխանութիւն, ուրաք եմ, որ այստեղ մեզ երկուսիս  
տեսնում եմ գեղջկական գեղեցկութիւններով զարդարուած,  
Կարծես թէ բախտաւոր հովուչիք լինենք և երջանիկների նը-  
ման զրադուած ենք, Պատառակներ ենք հիւսում: Եյս դժնզգոյն  
պահկը հետէն փնջաղարդում է իմ ձեռքում, իսկ դու, քո առ-  
ւելի բարձրաթոիչ իւելքով և վսեմ հոգով ընտրել ես նուրբ և  
գեղակազմ դափնին:

## ԻՇՆԱՇՆՈՒՏ

Այս ոստերը, որ ես մտածմունքի մէջ խորասուզուած  
հիւսել եմ, մի արժանաւոր գլխի համար են: Երախտազիտու-  
թեամբ դնում եմ Վիրդիլիոսի գլխին: (Պատառակներն է Վիրդիլիո-  
սի կիսարձանը):

## ԼԵՇՆՈՐԵ

Իսկ ես իմ ծաղկախիտ, գեղածիծալ պսակը դնում եմ  
Ճարտարաբան Լուդովիկոսի բարձր ճակատին (պատառակն է Ա-  
րիոստի կիսարձանը), նա, որի կատակներն երբէք չեն թառա-  
մում: Թող նա էլ իսկոյն ստանայ իր մասը նորահաս գարու-  
նից:

## ԻՇՆԱՇՆՈՒՏ

Եղբայրս այնքան սիրալիր եղաւ, որ այսպիսի օրերում  
մեզ ամարանոց ուղարկեց: Մենք առանձնացած ենք և կարող  
ենք ժամեր շարունակ երևակայի թէ դտնւում ենք բանա-  
ստելծների ոսկէ դարում ես սիրում եմ Բէլրիգուարդօն, ո-  
րովիշետև մանկութեանս ժամանակ այստեղ ուրաք օրեր եմ  
տեսել: Այս թարմ կանաչը և այս արել յիշեցնում են ինձ  
այն ժամանակուայ զգացմունք:

## ԼԵՇՆՈՐԵ

Այս, մեզ շրջապատում է մի նոր աշխարհ: Այս մշտա-  
դալար ծառերի ստուերն արդէն ուրախալի է: Մեղ զովացնում  
է նաև այս աղբիւրների կարկաչնունը: Նորաբողբոջ ոստերը  
կախուած երերում են առաւօտեան զովում: Ծաղիկներն ի-  
րենց բաժակներից մանկական անմեղութեամբ ուրաք նայում  
են մեզ վրայ: Պարտիզանն արդէն վստահ բացում է նարինջ-  
ների և կիւրոնների ջերմոցը, կապոյտ երփինքը հանդարտ  
տարածուած է մեզ վրայ և հորիզոնում հեռաւոր լեռների ձիւ-  
նը հալուելով տարածում է մեղմ բուրմունք:

ԽԸՆԱՌԱԴԻ

Գարունն ինձ շատ հաճելի կը լինէր, եթէ չը կլէր ինձ-  
նից բարեկամիս

ԼԵՅՆՈՐԵ

Ո՞չ, իշխանուհի, այս սրանչելի ժամում մի՛ յիշեցնիր  
ինձ, որ պէտք է շուտով հրաժեշտ տամ:

ԽԸՆԱՌԱԴԻ

Ինչ որ այստեղ թողնում ես, կը գտնես այն մեծ բաղա-  
բում կրկնապատիկ:

ԼԵՅՆՈՐԵ

Ինձ կանչում է պարտքն, ինձ կանչում է սէրը դէպի ա-  
մուսինս, որ երկար ժամանակ զրկուած է ինձնից. Տանում եմ  
նրա մօտ իր որդուն, որ այս տարի այդպէս ու շատ մեծացելր  
այդպէս շուտ ձեւակերպուել է, որ մասնակից լինեմ նրա հայ-  
րական ուրախութեանը: Մեծ և սրանչելի է Փլորենցան, բայց  
այդտեղ հաւաքուած բոլոր գանձերի արժեքը չի հասնի Գէր-  
րարայի գոհարներին: Ժողովուրդն այդ բաղաքը բաղաքի դարձ-  
րեց, իսկ Գէրրարան մեծ դարձաւ իր իշխաններով:

ԽԸՆԱՌԱԴԻ

Աւելի այն լաւ մարդկանցով, որոնք պատահմամբ եկան  
այստեղ և բախտի բերմամբ մնացին:

ԼԵՅՆՈՐԵ

Դիպուածը հեշտութեամբ ցրում է այն, ինչ ժողո-  
վել է: Ազնիւ մարդը քաշում է դէպի իրեն ազնիւ մարդ-  
կանց եւ զիտէ ծեզ նման զրաւել նրանց: Եղբօրդ և բեզ  
հետ կապում են այնպիսի անձինք, որոնք ձեզ արժանի են և  
դուք արժանի էք ձեր մեծաշուք նախնեաց: Այս տեղ փայլով  
ծագեց զիտութեան և ազատամութեան գեղեցիկ լցուը, երբ  
բարբարոսութիւնը դեռ թանձր խաւարով քոլարկուած էր պա-  
հուած երկիրը: Մանկութեանս ժամանակ արդէն հնչում էին ա-  
կանջիս Հէրկուլէս Փօն Էստէի և Հիպոլիտ Փօն Էստէի անուն-  
ները: Հայրս շատ էր գովարանում Փէրրարան, Հռովմը և Փյո-  
րէնցան: Ես յաճախ փափառել եմ տեսնել այդ բաղաքները.  
Վերջապէս աչա այստեղ եմ: Այստեղ հիւրընկալել, ինամել են  
Պէտրարքային և այստեղ Արիստուը գտաւ իր կաղապարները:  
Խտալիայում չէ յիշւում ոչ մի մեծ անուն, որ այս տանը հիւր-  
ընկալուած չը լինէր: Եւ մեծապէս օգտաւէտ է հիւրընկալել

հանձարը. Դու նրան տալիս ես մի ընծայ, նա քեզ մի աւելի գեղեցիկն է վերադարձնում Այն բաղաբներն, ուր մտել է մի լաւ մարդ, նույիրական են, Դարերից յետոյ էլ այնտեղ նրա խօսքն ու գործն արձագանք են գտնում ապագայ սերնդի մէջ.

## ԻՇԽԱՆՈՒՅԻՆ

Եթէ սերունդը քեզ նման վառ է զգում, շատ անգամ նա- խանձում եմ քեզ այդ լաղդաւորութեան համար:

## ԼԵՇՈՐԻ

Որը գու սակաւների թւում վայելում ես հանդարտու- թեամբ և պարզօքէն: Կի սիրտս ստիպում է ինձ իսկոյն ասել, ինչ որ վառ զգում եմ Դու այդ աւելի լաւ, աւելի խոր ես զգում և յուրա ես Այսրկեանի փայլը չէ կուրացնում քեզ, սրամութիւնը չէ կաշառում քեզ, շողոբորթութիւնն իր ա- րուեստականութեամբ ի զուր է խորամանզօրէն հպւում ական- ջիդ: Միարդ հաստատ է մասւ և ճաշակդ ընտիր, դատավճիռդ արդար, մեծ է միշտ քո մասնակցութիւնը մեծ գործում, որը գու գիտես, ինչպէս ինքդ քեզ:

## ԻՇԽԱՆՈՒՅԻՆ

Դու այդ մեծ շողոբորթութիւնը չը պէտք է քօղարկէիր մտերիմ բարեկամութեան ձածկոցվ:

## ԼԵՇՈՐԻ

Բարեկամութիւնը ճշմարիտ է. բայց այդ այնուամենայնիւ կարող է ճանաչել արժանաւորութեանդ ամբողջ չափը: Թշլ տուր ընդունել, որ ինչպէս պատեհութիւնը, նոյնպէս էլ բախտն ունեն իրենց մասը քո կրթութեան մէջ: Այդ գու ունես և վերջապէս այդպէս, որ կաս, աշխարհը նախադասում է քեզ և բրոցդ ձեր ժամանակուայ ըոլոր մեծ կանանցից:

## ԻՇԽԱՆՈՒՅԻՆ

Լէօնօրէ, այդ ինձ կարող է քիչ չետաբրբել, երբ մտա- ծում եմ, թէ որբան չնչին ենք և ի՞նչ որ ենք, պին էլ ուրիշ- ներին ենք պարտական: Մօրս եմ պարտական հին լեզուներ գի- տենալու և լաւագյունը ճանաչելու համար, որոնք նախնիքնե- րից թողած ժառանգութիւն են, Բայց նրա հետ գիտութեամբ և զգոն խելքով երբէք չի կարող հաւասար լինել նրան երկու դուստրներից ոչ մէկը եւ եթէ մէկը հաւասարուելու լինի նրա հետ, այդ է հարկէ, իրաւամբ Լուկրէցիան է: Կարող եմ նաև

հաւատացնել բեզ, որ երբէք նշանակութիւն չեմ տուել ոչ այն գիրքին և ոչ էլ այն ստացուածքին, որ ինձ տուել են թէ բնութիւնը և թէ բախտը ևս ուրախ եմ, որ բանիմաց մարդիկ խօսելիս, ես կարողանում եմ հասկանալ նրանց մտքերը Աւարերէր պարզ դատողութիւնը հին ժամանակի մի անձնաւորութեան և նրա գործերի արժանաւորութեան, վերաբերէր խօսքը մի զիտութեան, որ փորձով ընդլայնուած, վսեմացնելով մարդուն, նպաստում է նրան. Խնչ ընթացք որ ստանում է ազնիւ մարդկանց խօսակցութիւնը, ես ուրախութեամբ հետեւում եմ, որովհետեւ հեշտութեամբ եմ կարողանում հետեւել, ես ուրախութեամբ ունկնդիր եմ լինում խելացի մարդկանց վիճաբանութեանը, երբ պերճախօսի շրթունքը շնորհալի կերպով խաղում են այն ուժերի շուրջը, որոնք շարժում են մարդու կուրծքն այնքան մտերմութեամբ և այնքան սաստկութեամբ Խնձ հաճելի է, երբ իշխանների փառքի, տիրապետութեան լայնացման տեսնը դառնամ է նիւթ իմաստաւիրի համար և երբ սուր խոհականութիւնը, նրութեամբ արծարծուած մի խելօք մարդուց, փոխանակ մոլորեցնելու, մեզ ուսուցանում է.

## ԼՀՕԽՈՐԾ

Այս ծանրակշիռ խօսակցութիւնից յետոյ մեր լսելիքը և մեր ներքին զգացմունքը մեծ քաղցրութեամբ հանդչում են բանաստեղծի հանդերի վրայ, որն ամենասիրելի վերջին զգացմունքը՝ ները, սրանչելի ճայներով ներշնչում է մեր հոգու մջի, Քո բարձր խելքն ընդգրկում է մի լայնածաւալ շրջան, ես աւելի մեծ սիրով հանդում եմ բանաստեղծութեան կղզու դափնէ պրակի մջի.

## ԻՇԽԱՆՈՒՅՆ

Խնձ կամենում էին համոզել որ այս գեղեցիկ երկրում, բոլոր ծառերից աւելի լաւ աճում է մրտենին, եւ եթէ մուսաների նման շատ շատերը կան, այնուամենայնիւ սակաւ են ուրանում նրանց մէջ մի ընկերութիւն և խաղակից, երբ ուրախութեամբ կարող են հանդիպել բանաստեղծին, որը կարծես թէ մեկանից խորցում է, կարծես թէ մի բան է որոնում, որ մենք չենք ճանաչում և կարելի է, որ վերջ ՚ի վերջը ինքն էլ չի ճանաչում: Շատ սիրալիք կը լինէր, եթէ նա հանդիպէր մեզ պատեհ ժամին, իսկոյն հիանալով մեզ ընդունէր այն գանձի տեղ, որ նա իզուր երկար ժամանակ որոնում է լայնատարած աշխարհում:

## ԼԵՇՆՈՐԵ

Պէտք է կատակիդ համբերեմ, թէպէտե ինձ է վերաբերում, բայց ինձ շատ էլ փոյթ չէ: Ես յարգում եմ ամեն մարդու և նրա արժանաւորութիւնը և Տասսօի վերաբերմամբ, ես միայն արդարացի եմ: Նրա աչքը հազիւ թէ կանդ է առն ում այս աշխարհիս վրայ, նրա ականջը լսում է ընութեան ներդաշնակութիւնը, ինչ որ պատութիւնը թափանցում է, կեանքը աալիս է, նրա կուրծքն իսկոյն յօժարութեամբ ընդունում է, նրա հոգին ժողովում է ցիր ու ցան եղածը և նրա զդաշմունքն անշընչն կեանք է տալիս նա յաճախ ազնուացնում է այս, ինչ որ մեզ հասարակ է թւում, իսկ թանկազինը կորցնում է նրա աչքում իր արժէքը: Այդ զարմանալի մարդը թափառում է իրեն յատուկ այդ կախարդական շրջանում և ստիպում է մեզ իր հետ թափառել և իրեն մասնակից լինել Պարծես թէ նա մատենում է մեզ բայց և մեզանից հեռու է մնում, կարծես նա մեզ է նայում: Բայց կարելի է, որ նրան մեր տեղ երբեմնապէս ողիներ են երեսում:

## ԻՇԽԱՆՈՒՅԻ

Բանաստեղծին նկարագրեցիր նրբութեամբ և մեղմութեամբ, որ սաւառնում է բաղցը երազների թագաւորութեան մէջ: Բայց ինձ թւում է, որ իրականութիւնը նոյնպէս նրան ուժգնաբար քաշում է դէպի իրեն և կաշկանդած է պահում: Այն զեղեցիկ երգերը, որ մենք երբեմնապէս գտնում ենք ոսկէ խնձորների նման մեր ծառերի վրայ կպցրած, յօրինում են մեզ համար անուշաբայր նոր հեսպերեան<sup>1)</sup> պարտէզներ: Միթէ այդ բոլորը չե՞ս ընդունում որպէս անկեղծ սիրոյ սրանչելի պառաղներ:

## ԼԵՇՆՈՐԵ

Այդ զեղեցիկ թերթերն ինձ ևս հիացնում են, նա իր բոլոր հանգերի մէջ բազմազան հանձարով փառաբանում է միայն մէկ անձնաւորութիւն: Երբեմն բարձրացնում է նրան լուսափայլ շուրջ մէջ մինչև աստղազարդ երկինք և մեծարելով ինքը որպէս հրեշտակ, ամպերի վրայ, խոնարհում է այդ պատկերի առջև, յետոյ կանաչազարդ, խաղաղ դաշտերի վրայով հետեւում է նրան

<sup>1)</sup> Հեսպերիա կոչւում-էին Իւպիտերի երեք աղջկերքը, որոնք ունէին մի ամենազեղեցիկ պարտէզ, որտեղ կային ոսկէ խնձորներով ծառեր:

և ամէն մի ծաղկից պսակ է հիւսում նրա համար Հեռանում է մեծարուածը, սրբազնացնում է պյն շափիդն, ուր նրա գեղեցիկ ոտքը մեղմութեամբ դիպել է, Թուփերի մէջ թագնուած, իր սիրահար կրծքից, տոխակի նման, լցնում է անտառը և օդը քաղցրահնչիւն ողբերով՝ նրա յուզիչ տանջանքն, երջանկութեան կոկիծը, գրաւում է ամեն մի ականջ և ամեն մի սիրտ պէտք է հետեւ նրան:

## ԻՇԽԱՆՈՒՅՆ

Եւ երբ նա անուանում է իր սիրոյ առարկան, նրան—  
Լէօնօրէ անունն է տալիս:

## ԼԷՕՆՈՐԻ:

Այդ ինչպէս քո, նշյնպէս և իմ անունն է: Ես կը նեղանայի, եթէ մի ուրիշ անուն լինէր, Ես ուրահն եմ, որ նա գեպի քեղ ունեցած զգացմունքը կարող է թագցնել այդ երկդիմութեան տակ, Ես գոչ եմ, որ նա այդ անուան սրանչելի ձնշման հետ ինձ էլ է մտարերում: Այսեղ հարցն այն տեսակ սիրոյ մասին չէ, որ կամենում է տիրել իր առարկային, բացառապէս իւրացնել նրան, որ նախանձից ցանկանար ամեն մարդու արգելել նայելու: Եթէ նա երջանիկ մտածմունքի մէջ պարապում է քո արժանաւորութեամբ, թող մի փոքր զբաղուի նաև իմ աւելի չնչին անձնաւորութեամբս: Նա մեզ չէ սիրում ներիր, որ այդ ասում եմ: Ամեն տեղից ժողովում է նա, ինչ որ սիրում է, մէկ անուան շուրջը, որ մենք կրում ենք և մեղ հազորդում է իր զգացմունքը: Մեղ թւում է, որ մենք այդ մարդուն սիրում ենք, բայց մենք նրա հետ միասին սիրում ենք միայն բարձրագյնը, որ մենք կարող ենք սիրել:

## ԻՇԽԱՆՈՒՅՆ

Լէօնօրէ, դու այդ գիտութեան մէջ շատ ես խորասուզուել: այնպէս բաներ ես ասում ինձ, որոնք համարեա թէ միայն շփուում են ականջիս և հազիւ թէ կարողանում են հոգուս մէջ թափանցել:

## ԼԷՕՆՈՐԻ:

Դու, Պղատոնի աշակերտուհի, չը հասկանա՞ս, թէ մի նորեկ ինչի՞ մասին է վստահանում շատախոսել քո առջեւ: Այդ կարող էր պատահել, եթէ ես շատ սիրալուած լինէի, բայց և լաւ գիտեմ, որ բոլորովին չեմ սիրալուում: Այս սրանչելի ուսումնարանում սէրը սովորական կերպով չէ յայտնուում, որպէս

երես տուած երեխայ. Այդ այն երիտասարդն է, որ Պահեէի Հետ ամուսնացել-է և չաստուածների խորհրդում տեղ և ձայն ունի նա թեթևամտեամբ չէ ընկնում մէկի կրծքից դէպի միւսինը նա բաղցր մոլորմունքով իսկոյն չէ կապում գեղեց կութեան և վայելուչ հասակի հետ և յետոյ նա չէ զղում զղուանքով ու գժգոհութեամբ իր շուտափոյթ սիրոյ հրապարքի համար:

## ԻՇԽԱՆՈՒՅԻՆ

Աչա եղբայրս գալիս է: Ցայց չը տանք, թէ խօսակցութիւններս կրկին մեր ուր է տարել Կարող ենք ենթարկուել նրա կատակներին, ինչպէս մեր հագուստն ենթարկուեց նրա չեղնութեանը:

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻՒՆ

## ԱՌԱՋԻԿԱՆԵՐԸ, ԱԼՓՕՆՍ

## ԱԼՓՕՆՍ

Տասսօ'ին որոնում եմ և ոչ մի տեղ չեմ գտնում: Ճեզ մտս նշյնպէս չեմ տեսնում նրան, Կարող էք արդեօք նրա մասին մի տեղեկութիւն տալ ինձ:

## ԻՇԽԱՆՈՒՅԻՆ

Ես երեկ նրան տեսայ մի կարճ միջոց, այսօր չեմ տեսել:

## ԱԼՓՕՆՍ

Մի հին սխալ է, որ նա աւելի պտռում է միայնութիւնը, բան հասարակութիւնը, ես նրան կը ներէի, եթէ նա խուսափէր մարդկանց բազմազան ամրոփից և աւելի յօժարութեամբ խաղաղութեան մէջ ազատ ինքն իր ոգու հետ խօսակցէր, Բայց ես չեմ կարող գովել, որ նա ինքը խորշում է այն շրջանից, որ կազմում են նրա բարեկամներ:

## ԼՀՈՒՈՐԸ

Նլթէ չեմ սխալում, ո՞վ իշխան, այդ մեղադրանքը շուտով ուրախալի գովեստի ես փոխարկելու: Այսօր հեռուից տեսայ նրան, ձեռքին բռնել էր մի գիրք և մի թերթ, զրում էր և գնում էր և կրկին զրում էր: Երեկ նա ինձ մի խօսք ասաց հարեւանցօրէն և ինձ թուաց, որ նա մտադիր է իր երկասիրութիւնը յայտնել վերջացրած: Նա աշխատում է միայն բարւո-

քել մի բանի գծեր, որ առաջարկէ վերջապէս մի արժանաւոր նուէր քո բարեհաճութեանը, որը նրան այդքան շատ նպաստել է.

## Ա.ԳՈՒՅ

Նրա գալուստը թող բարի լինի, եթէ նա իր երկասիրութիւնը բերի, թող նա երկար ժամանակ ազատ լինի, Որքան նրա աշխատանքն ինձ հետաքրքրում է, որքան այդ մեծ գործը, շատ կողմից ուրախացնում է ինձ և պէտք է ուրախացնի, այնքան էլ աւելացնում է անչամրերութիւնս, նա չի կարողանում վերջացնել, չի կարողանում պատրաստել, միշտ փոփոխում է, դանդաղ է առաջ գնում, յետոյ կանգ առնում և յուսափար է անում, Մարդ ակամայ տեսնում է հեռացած երկար ժամանակ այն զուարծութիւնը, որ այդքան մօտ էր թւում,

## Ի.ԸՆԸՆՈՒՅ

Ես զովում եմ համեստութիւնը, հոգացողութիւնը, որով նա քայլ առ քայլ դիմում է դէպի նպատակը, Միայն շնորհիւ մուսաների այդքան հանգերը կարող են սերտ ի մի կապուել և նրա հոգին գուրգուրում է միայն այն ձգումը, որ նրա երկն ամփոփ լինի, նա չի կամենում առասպելներն առասպելների վրայ զիզել, որոնք գրգուելով զբաղեցնում են և ի վերջոյ որո պէս ունայն խօսքեր, նուազելով միմիայն խարում են, Թողն նրան եղբայր, որովհետև ժամանակը չափ չէ մի լաւ երկասիրութեան համար և եթէ ապագայ սերունդն է վայելնու, բանաստեղծի ժամանակակիցները պէտք է մոռացուեն:

## Ա.ԳՈՒՅ

Թող մենք միասին գործենք, սիրելի քոյր, ինչպէս յաճախ աշխատել ենք միմեանց օգտին, Եթէ ես շատ եռանդուտ լինեմ, չափաւորիր և եթէ դու շատ դանդաղ լինես, ես պէտք է քեզ երախուսեմ, Այն ժամանակ կարելլ է, որ մէկէն ի մէկ տեսնենք նրան այն նպատակին հասած, որ երկար ժամանակ մեզ համար ցանկալի է եղել Այն ժամանակ թող մեր հայրենիքը և աշխարհը զարմանան, թէ որպիսի երկասիրութիւն է աւարտած, Այդ փառքից ես իմ մասը կ'ստանամ, իսկ նա կը ներմուծուի կեանքի մէջ, Մի ազնիւ մարդ չի կարող իր զարգացմամբ մի, նեղ շրջանի պարտական լինել, Հայրենիքը և աշխարհը պէտք է ներգործեն նրա վրայ, նա պէտք է սովորի կրել փառքը և պարսաւանքը, նա ստիպուած կը լինի լաւ ճանալել ի-

բեն և ուրիշներին, Միայնութիւնը նրան շողոքորմելով այլ ևս չի որորի, Թշնամին չի խնայիլ, իսկ բարեկամը չի համարձակուիլ ինայել նրան Այն ժամանակ երիտասարդը կոռւելով գործադրում է իր շյերը, զգում է ինչ որ և ևնդ նմին շուտով տղամարդ է զգում:

## ԼՅՈՆՈՐ:

Ուրեմն, Դու Տէր, նրա համար ամեն բան կ'անես, ինչպէս Դու մինչև այժմ արդէն նրա համար շատ քան արել ես, Տաղանդը կազմակերպում է խաղաղութեան մէջ, ընաւորութիւնն աշխարհի յործանքի: Ո՞չ երանի նա իր զզացումն, ինչպէս և իր գեղարուեսար կազմէր քո վարդապետութեամբ, որ նա այլ ես չը խորչէր մարդկանցից, որ նրա կասկածանքը վերջի վերջը չը փոխարկուէր երկիւղի և ատելութեան:

## ԱԼՓՈԽ

Մարդկանցից վալսենում է նա, ով նրանց չի ճանաչում, եւ ով որ խուսափում է, նրանց շուտով սխալ կը ճանաչի: Հենց այդ մինչյնը նրա հետ է պատահել, իսկ այդպէս մի աղատ հոգի հետպիտեա կը շփոթուի և կը կաշկանդուի: Այդ կերպիւ յաճախ նա աւելի իմ հաճցըի համար է հոգում, բան նրան պատշաճ է, նա հաւատ չի ընծայում լարերին, որոնք հաստատ գիտեմ նրա թշնամիքը չեն: Պատահում է, որ նրա մի նամակը կորչում է, որ մի ծառայ նրա ծառայութիւնից ուրիշի մօս է գնում, որ մի թուղթ է կորցնում, նա իսկըն դիտաւորութիւն է ենթագրում, անհաւատարմութիւն, նենդութիւն, որոնք խորում են նրա ճակատագիրը:

## ԻՇԽԱԿՈՒԴԻ

Թող չը մոռանանք, սիրելի եղբայր, որ մարդ ինքն իրենից չի կարող բաժանուել Եւ եթէ մի բարեկամ, որ ստիպուած է մեղ հետ թափառել իր մի ոտը ցաւացնի, մենք այն ժամանակ յօժարութեամբ կամաց կը գնանք և կամաւ, ու սիրով կը մեկնենք նրան մեր ձեռքը:

## ԱԼՓՈԽ

Աւելի լաւ կը լինէր, եթէ կարողանայինք նրան բժշկել, աւելի լաւ կը լինէր իսկոյն բժշկի անկեղծ խորհրդով մի բուժումն փորձէինք, յետոյ բուժուածի հետ գնայինք ուրախ կեանքի նոր ճանապարհով: Բայց յոյս ունեմ իմ սիրելիքս, որ ես երբէք չեմ բարձի իմ վրայ անսիրտ բժշկի մեղքը: Ես անում եմ,

ինչ որ կարող եմ, որպէս զի դրոշմեմ նրա կրծքի մէջ անկաս-  
կածութիւն և վստահութիւն, Ծատերի ներկայութեամբ ես  
Ճախ ցոյց եմ տալիս նրան իմ շնորհքի հաստատ նշանները  
Եթէ ինձ գանգատում է, ես քննութիւն եմ նշանակում, ինչ  
պէս և արեցի, երբ նա նորերումս կարծում էր, որ նրա սե-  
նեակի դուռը կոտրել են, Եթէ քննութիւնից ոչինչ չէ յայտն-  
ուում, թողնում եմ անուշադիր, Եւ որովհետեւ պէտք է ամեն  
բան գործադրել, ես գործադրում եմ Տասսօի վերաբերմամբ  
Համբերութիւն ըստ որումնա դրան արժանի է, Եւ դուք, ես  
զիտեմ, որ ինձ հետ համաձայն էք, Այս օր ես ձեզ ամարանոց  
բերեցի և այս երեկոյ վերադառնալու եմ քաղաք, Դուք մի վայր-  
կեանով կը տեսնէք Անտօնիոին, Նա գալիս է Հռովմից և ինձ  
հետ կը զնայ, Մենք խօսելու, և վերջացնելու շատ գործեր ու-  
նենք, Պէտք է որոշումներ անել, շատ նամակներ գրել, պար-  
բռնորդ ստիպում են ինձ վերադառնալ քաղաք,

Ի. Խ. Ա. Ռ. Դ. Հ.

**Թ Ս Յ Լ Կ Ը Մ տամ մեզ, որ ուղեկցնէ քեզ:**

Ա. Փ. Օ. Ա.

Առ այժմ մնացէք Բէլրիզուարդո՛ում, միասին գնացէք Քօն-  
սանդոյի, Վայելեցէք գեղեցիկ օրերը, ինչպէս ցանկանումէք,

Ի. Խ. Ա. Ռ. Դ. Հ.

Միթէ դու չես կարող մեզ հետ գնալ Գործերդ կատարել  
ինչպէս քաղաքում, նոյնպէս և այստեղ:

Լ. Հ. Օ. Ր. Դ.

Դու Անտօնիոին իսկյան խլում ես մեղանից, երբ նա պէտք  
է մեզ շատ բան պատմէք Հռովմի մասին:

Ա. Փ. Օ. Ա.

Կարելի չէ, սիրելիքս, Սակայն երբ կարելի եղաւ, մենք  
իսկյան միասին կը վերադառնանք, Թող այն ժամանակ ձեզ պատ-  
մի և դուք ել պէտք է ինձ օգնէք նրան վարձատելու, որովհ-  
չետեւ նա գարձեալ շատ է աշխատել իմ համար, իր ծառայու-  
թեան մէջ Եւ երբ կը վերջացնենք մեր խօսակցութիւնները,  
այն ժամանակ կարող է գալ խուռն բազմութիւնը, որ մեր պար-  
տէզներում ուրախութիւն լինի, որ գեղեցկութիւնը յօժարու-  
թեամբ հանդիպի ինձ զովութեան մէջ, երբ նրան որոնելու  
լինեմ:

Լ. Է. Օ. Ն. Օ. Ր. Ե.

ՄԵՆՔ ՀՀ ՀԱՅՈՒԹԵԱՄՔ մեր մատների արանքներով կը  
նպյենք:

Ա. Գ. Գ. Օ. Ն. Ս.

ԸՆԴՀԱԿԱՊՈՎԱԿՆ դուք գիտէք, որ ես կարող եմ խնայել:  
Խ. Խ. Խ. Խ. Խ. Խ.

(Պառնալով գէպի բէմը)

Վ. աղուց արդէն տեսնում եմ, որ Տասսօն գալիս է, նա յամը  
շարժում է իր բայլերը և իրեւ երկմիտ երբեմն յանկարծ  
կանդնում է, յետոյ արագութեամբ դիմում է գէպի մեջ և կըր-  
կին կանգ առնում:

Ա. Գ. Գ. Օ. Ն. Ս.

Մի խանգարէք նրա երազները, երբ նա մտածում, բա-  
նաստեղծում է և թողէք թափառի:

Լ. Է. Օ. Ն. Օ. Ր. Ե.

Ո. Հ. Նա տեսաւ մեջ և այստեղ է գալիս:

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ.

Ա. Ռ. Ա. Զ. Խ. Խ. Խ. Ե. Բ. Տ. Ա. Ս. Ս. Ս. Օ.

ՏԱՍՍՈ

(Մադաղաթակալմ մի գիրք ձեռքին բռնած)

Գալիս եմ յամրաբայլ, ձեզ համար մի երկասիրութիւն  
քերելու և գեռ վարանում եմ մատուցանել քեզ, ես քաջ գի-  
տեմ, որ գեռ վերջացրած չէ, թէպէտե կարող է թուալ, թէ  
վերջացրած է, Սակայն չէի կամենում անկատար ներկայացնել  
քեզ, այժմ մի նոր հոգս ստիպում է ինձ այդ: Բայց յօժարու-  
թեամբ չէի կամենայ երկըտ երեխի, չէի կամենայ անշնորհակայ  
հանդիսանալ, եւ ինչպէս մարդ կարող է ասել. ահա այստեղ  
եմ, որ բարեկամները նրան խնայելով ուրախանան, ես էլ այն-  
պէս կարող եմ միայն ասել, ընդունիր: (Տալիս է գիրքը):

Ա. Գ. Գ. Օ. Ն. Ս.

Դու զարմացնում ես ինձ քո այդ նուերով և այս գեղե-  
ցիկ օրը մի տօն ես դարձնում իմ համար: Աերջապէս այս իմ  
ձեռքումն է և որոշ մոքով, իմ սեփականութիւնն եմ համա-

րում ես արդէն վաղուց ցանկանում էի, որ դու այդ որոշումն անէիր և վերջապէս ասէիր, ահա, բաւ է այս

## ՏԵՍՍՈ

Եթէ դու բաւական ես, ուրեմն կատարեալ է այդ, որով Հետև ամենայն տեսակէտից քեզ է պատկանում: Եթէ դիտէի աշխատութիւնը, որ գործադրել եմ նայէի գրչիս զծածներին, կարող էի ասել, այդ երկասիրութիւնն իմն է: Սակայն ուշադրութեամբ զննում եմ, թէ ինչն է տալիս այդ բանաստեղծութեանը ներքին արժէք և համարումն, ի հարկէ իսուտովանում եմ, ամրողովին միայն քեզանից եմ ստացեր: Եթէ բնութիւնն իր հարուստ կարողութիւնից սիրով պարզել է ինձ բանաստեղծութեան սրանչելի հանճարը, կամակոր բախտը բուռն ուժով վանել է ինձ իրենից: Երբ գեղեցիկ աշխարհն իր ամրող հիմանայի լիութեամբ զրաւեց պատանեկան հայեացքս, կարիքը, որին արժանի չէին թանկազին ծնողներս, շուտ պղտորեց երիտասարդական միտքա Երբ շրմունքս բացւում էին երդի համար, հնչում էր նրանցից մի տիրալի երդ և ես մեղմ հնչիւններով մասնակցում էի հօրս ցաւերին և մօսս տանջանքներին: Միայն դու էիր, որ նեղ կեանքից ըարձացըրիր ինձ դէպի մի գեղեցիկ ազատութիւն, ամեն մի հոգս գլխիցս վերցըրիր, տուիր ինձ ազատութիւն, որպէս զի հոգիս կարողանար բաջասիրտ երդ արտայայտել: Խնչ զնահատութիւն էլ որ ստանայ իմ երկասիրութիւնը, քո շնորհըզ է, որովհետև շնորհըզ քեզ է պատկանում:

## Ա. ՓՕՆԾ

Երկրորդ անգամ արժանի ես ամենայն գովասանքի. համեստութեամբ պատւում ես միանաւագ քեզ և մեղ:

## ՏԵՍՍՈ

Ո՞չ, եթէ կարողանայի ասել: Որքան վառ զգում եմ, որ ես միայն քեզանից եմ ստացել ինչ որ մատուցանում եմ: Միթէ անփոք երիտասարդն ինըը շարադրեց բանաստեղծութիւնը: Միթէ ինքը հնարեց շուտափոյթ պատերազմի ինելացի զեկավարութիւնը, զէնքի արուեստը, որ ամեն մի հերոս ուժգնութեամբ ցցց է տալիս վճռական օրը: Ինչպէս և զօրապետի հմաստութիւնը և ասպետի քաջութիւնը, նաև ինչպէս իորամանկութիւնը և զգուշութիւնը պատերազմումն միմանց հետ, դու չէի՞ր, ով իմաստուն քաջ իշխան, որ ներշնչեցիր ինձ այդ բո-

լորը, որպէս թէ իմ հանձարը լինէիր, որ մի առանձին ուրաս  
խութեամբ էր զգում իր սրանչելի, անհասանելի բարձր էու-  
թիւնը մի մահկանացուի միջնորդութեամբ արտայայտելու,

## ԽԸՆԱԿԱՆԵՐ

Այժմ վայելիր երկասիրութիւնը, որ մեզ ուրախացնում է,  
Ա.ԳՕՆՍ

Ուրախացիր ամեն մի լաւ գործի հաւանելուն.

## Լ.Հ.ՕՆՕՐԻ

Ուրախացիր ընդհանուր փառքին.

## ՏԱՍՍՈ

Այս վայրկենում ինչ որ կայ ինձ բաւական է. Միայն  
ձեր մասին էի մտածում, երբ խորհում ու գրում էի. Դմ ամե-  
նամեծ ցանկութիւնս էր ձեզ հաճշանալ, իմ վերջին նպատա-  
կը ձեզ ուրախացնելն էր. Ով որ աշխարհն իր քարեկամ-  
ների մէջ չի տեսնում, նա արժանի չէ, որ աշխարհը  
նրա մասին տեղեկութիւն ունենայ: Այստեղ է իմ հայրե-  
նիքը, այստեղ է շրջանն, ուր հոգիս հանգչում է յօժարու-  
թեամբ: Այստեղ ունկնդիր եմ, այստեղ յարգում եմ ամեն մի  
ակնարկութիւն, Այստեղ հօսում է փորձառութիւնը, զիտու-  
թիւնը, ճաշակը, Այո՛, տեսնում եմ առջևս կանգնած աշխարհը  
և ապագայ սերունդը: Ամբոխը մոլորեցնում է բանաստեղծին  
և երկչու է դարձնում: Ո՛վ որ միայն ձեզ նման է, հասկա-  
նում է և զգում է, նա միայն պէտք է դատէ և վարձատրէ:

## Ա.ԳՕՆՍ

Եւ եթէ մենք առաջի առնենք աշխարհը և ապագայ սե-  
րունդն, այն ժամանակ պատշաճ չէ, որ այդ մենք միայն ըն-  
դունայն ընդունենք: Այն զեղեցիկ նշանը, որ մեծարում է բա-  
նաստեղծին, որին միշտ կարօտում է նոյն իսկ հերոսը և որը  
առանց նախանձի տեսնում է հիւսած նրա գլխի շւրջը, ես  
այստեղ նշանառում եմ քո նախնեաց ճակատին (Յոյց է տալիս  
Ակրղելիոսի կիսարձանը). Միթէ դիպուածը կամ մի ողի է  
այդ հիւսել և բերել: Այդ այստեղ մեզ ի զուր չէ երեսում:  
Լսում եմ Ակրղելիոսն ասում է. ինչու էք մեծարում հանգու-  
ցեալներին, նրանք վարձատրուել և ուրախացել են, որովհետեւ  
ապրել են և եթէ դուք մեզ վրայ զարմանում էք և մեզ մե-  
ծարում էք, տուէք նոյնպէս կենդանի մարդկանց իրենց մասը  
Դմ մարմարիօնի արձանն արդէն բաւականի զարդա-  
լութեան ու

բուած է պսակներով, կանաչ ոստը կեանքին է պատկանում: (Ալֆօնսն իր քրոջը նշանացի է անում Քյուրը վերցնում է պսակը Վիրզիլիոսի արձանից և մօտենում է Տասսօ'ին: Տասսօ'ն յետ է բաշլում):

## ԼԵՅՆՈՐԻ:

Դու հրաժարում ես Տես, ի՞նչ ձեռք է ընծայում քեզ այս գեղեցիկ անթառամ պսակը:

## ՏԱՍՍՈ

Ո՛չ թողէք մի փոքր ուշրի դամ ես չը գիտեմ մինչև անդամ թէ ի՞նչպէս պէտք է ապրեմ այս ժամկից յետոյ:

## ԱԼՖՈՇՆ

Այս ելելով այն հիանալի ունելութիւնը որ առաջին վայր-կեանում վախեցնում է քեզ:

## ԻՇԽԱՆՈՒՅԻ

(Բարձր բռնելով պսակը):

Դու կը պարզես ինձ մի հազուադիւտ ուրախութիւն, Տամսօ, քեզ անբարբառ ասել, ի՞նչպէս եմ մտածում:

## ՏԱՍՍՈ

Այդ գեղեցիկ ծանրութիւնը, քո թանկադին ձեռքից ծունր իշած ընդունում եմ իմ ազբատիմաստ գլխիս վրայ:

(Զորում է. իշխանուհին դնում է պսակը նրա գլխին):

## ԼԵՅՆՈՐԻ: (Ճափահարելով)

Կեցցէ՝ առաջին անդամ պսակաւորուածը, Որքան զարդա- րում է պսակը համեստ մարդին:

(Տասսօ'ն ոտի է կանգնում):

## ԱԼՖՈՇՆ

Դա մի նմանութիւն է այն ժագի, որ կապիտոլինում պէտք է զարդարէր քեզ:

## ԻՇԽԱՆՈՒՅԻ

Այնտեղ կը ողջունէի քեզ բարձրաձայն, այստեղ բարե- կամութիւնը մեղմ շրմունքով է վարձատրում:

## ՏԱՍՍՈ

Ո՛չ, յետ առ սրան զիմեցս, վե՛ր առ, Խանձում է զան- գուրներս և որպէս արեգակի մի տաք ճառագայթ, ընկնելով գլխիս վրայ, մտածողութեանս ոյժը դուրս է հանում ճակա- տիցս և այրում է, Զերմի տաք ւթիւնը շարժում է արիւստ, նե- րեցէք: Այդ արդէն շատ, շատ է:

## ԼԵՇՆՈՐԵ

Այդ ոստն աւելի պահպանում է մարդու գլուխը, որ ժամափառելու է փառաց տաք աշխարհներում և զովացնում է ճակատը:

## ՏԱՍՍՈ

Նս արժանի չեմ այն զովութիւնն զգալու, որ միայն բաշերի ճակատին պէտք է փէք: Դուք, աստուածներ, վերցրէք և լուսաւորէք սրան ամպերի մէջ, որ նա բարձր, աւելի բարձր և անհասանելի բարձր տատանուի, որ իմ կեանքը դէպի այդ նպատակը մի յաւիտենական թափառականութիւն լինի:

## ԱԼԳՈՒՄ

Ով վաղ է վատակում, նա վաղ է սովորում՝ գնահատել այս կեանքի հիասքանչ բարեաց բարձր արժէքը. ով վաղ է վայելում, իր կեանքում, կամաւ չի զրկում նրանից, ինչ որ երբեմն ունեցել է: Եւ ով ունի, պէտք է սպառազինուած լինի:

## ՏԱՍՍՈ

Եւ ո՞վ կամենում է սպառազինուել, պէտք է կրծքում զգայ ոյժ, որը նրան երբէք չի թողնում: Ախ, հէնց այժմ նա թողնում է ինձ, որն ինձ սովորցնում էր տոկուն կերպով հանդուրժել դժբախտութիւնը, իսկ հպարտ կերպով անիրաւութիւնը. Մի՛մէ այս վայրկեանի զմայլումն, քայրայել է անդամներիս ծուծը. Ծնկներս թուլաննեմ են, կրկին տեսնում ես ինձ, ո՞վ իշխանուէի, ծունկ խօնարհած քո առջև: Լսի՛ր ինդիքքս. յետ առ պսակը, որ ես, որպէս մի գեղեցիկ երազից զարթնած, զգամ մի զովացուցիչ նոր կեանք:

## ԻՇԽԱՆՈՒՅԻ

Եթէ դու համեստութեամբ և անվրդով կարող ես կրել տաղանդը, որ աստուածները տուել են քեզ, սովորիր նշյնպէս կրմլ այս ոստերը, որ ամենագեղեցիկն են, ինչ որ մենք կարող ենք քեզ տալ. Ում գլուխը մէկ անգամ նրանք արժանապէս շօշափում են, յաւիտեան երերուաւ են նրա ճակատի շուրջը:

## ՏԱՍՍՈ

Աւրեմն թոյլ տուէք պատկառանքով գնայ այս տեղից: Թոյլ տուէք, բախսոս խոր պրակում թագցնել, ինչպէս ես երբեմնապէս այնտեղ թագցրել եմ իմ ցաւերս. Եյնտեղ կամենում եմ միայնակ թափառել, այնտեղ ոչ մի աչք չի յիշեցնի ինձ այն

բախտը, որին ես արժանի չեմ Եւ ցոյդ է տալիս ինձ մօտաւորապէս մի պարզ աղքիւր իր մաքուր հայելիում մի մարդ, որը սքանչելապէս պսակաւորուած, իորհելով հանգստանում է երկընքի ցոլքում, ծառերի, ժայռերի մէջ, ինձ թւում է, ես տեսնում եմ Ելիսափոնը պատկերացած այդ կախարդական մակերեւոյթի վրայ. Ինձ ու ինձ լուս մածում եմ և հարցնում եմ, ավ կարող է լինել այդ անջատուածը: Անցած, զնացած ժամանակուայ մի երիտասարդ: Այդքան զեղեցկապէս պսակաւորուած: Ով կարող է յայտնել ինձ նրա անունը, նրա վաստակը: Երբ կար սպասում և մտածում եմ. երանի մէկն էլ զար, մի ուրիշն էլ զար և բազյրութեամբ մասնակցէր խօսակցութեանը: Ո՞չ, եթէ տեսնէի այդ աղքիւրի շուրջը ժողովուած հին ժամանակուայ հերօսներին, բանաստեղծներին: Ո՞չ, եթէ միշտ տեսնէի նրանց անրաժան, ինչպէս որ կեանքի մէջ ամուր միարանուած էին: Խնչպէս մագնիսն իր ոյժով ամուր կապում է երկաթն երկաթին, այնպէս էլ միակերպ ձգտումը կապում է գիւցադնին բանաստեղծի հետ: Հոմերոսն ինքն իրեն մոռացաւ, նրա ամբողջ կեանքը սուրբ էր երկու մարդկանց մտախոչութեան համար և Աղեքսանդրն շտապում է Ելիսիօն որոնելու Աքիլլէսին և Հոմերոսին: Ո՞չ, եթէ ես ներկայ լինէի, նրանց, այդ մեծ հոգիներին միաբանուած տեսնելու:

## ԼԵՇՆՈՐԻ:

Զարթիր, սթափուի՞ր: Մի՞ զդալ տայ մեզ, որ դու ներկան բոլորովին ուրանում ես:

## ՏԱՍՍՈ

Ներկան է, որ ինձ բարձրացնում է, միայն ես ինձ բացակայ եմ զդում, ես հիացած եմ:

## ԽԸՆԿԱԿԻ

Ես ուրախանում եմ, երբ դու ոդիների հետ ես խօսում և յօժարութեամբ լսում եմ, որ դու այդպէս մարդկօրէն ես խօսում: (Մի մանկաւիկ մօտենում է իշխանին և ծածկաբար մի բան է ասում):

## ԱԼԳՈՆՍ

Նա եկել է: Հէնց պատէհ ժամին: Անտօնիօ: Կանչը՞ր նըրան այստեղ: Աչա արդէն գալիս է:

## ԶՈՐՔՈՒՐԴ ՏԵՍԻԼ.

ԱՌԱՋԻՆՆԵՐՆ, ԱՆՏՕՆԻՕ.

## Ա.ՓՕՆԱ

Թարմէ եկար, դու, որ ինքդ ես գալիս և բերում ես բառի լուրի.

## ԻՇԽԱՆՈՒՀԻ

ԸՆԴՈՒՆԻԲ մեր ողջշնը:

## ԱՆՏՕՆԻՕ

Հազիւ վստահանում եմ ասել, թէ ինչ բաւականութիւն է ինձ նորից կենագործում ձեր ներկայութեամբ: Ձեր աշքերի առջև կրկին գտնում եմ ամենը, որոնցից ես երկար ժամանակ զրկուած էի, Դուք գոյ էք երեսում արած, կատարած եմ: Եւ այդ կերպիւ ես վարձատրուած եմ ամեն մի հոգացողութեանս համար, թէ անհամբերութեամբ սպասած և թէ դիտմամբ կորցրած օրուան համար: Վերջապէս մենք յաջողեցրինք, ինչ որ մենք կամենում էինք և ոչ մի վէճ չ'ունենք այլ ետ:

## ԼՀՈՒՈՐԴ

Ես էլ ողջունում եմ քեզ, թէպէտև քեզ վրայ բարկացած եմ: Դու այն ժամանակ ես գալիս, երբ ես պէտք է գնամ: ԱՆՏՕՆԻՕ

Որպէս զի բախտաւորութիւնս ամբողջովին լիակատար չը լինի, խլում ես ինձանից դրա մի գեղեցիկ մասը:

## ՏԱՍՍՈ

Նոյնպէս իմ ողջշնը Յօյս ունիմ, որ բազմակողմանի փորձուած մարդուն երկայութիւնն ինձ համար էլ ուրախալի կը լինի: ԱՆՏՕՆԻՕ

Դու ինձ նշմարիս կը գտնես, եթէ մի որեւէ անգամ կարողանաս քո աշխարհից դէպի իմը նայել:

## Ա.ՓՕՆԱ

Թէպէտև նամակով արդէն յայտնել ես ինձ, թէ ինչ ես արել և ինչպէս է ընթացել ամեն ինչ, այնուամենայնիւ պէտք է շատ բան հարցնեմ, թէ ինչ միջոցներով յաջողեցրիր գործը: Այն տարօրինակ երկրում բայլը պէտք է լաւ հաշուած լինի, եթէ վերջ ի վերջ նա պէտք է հասցնի քեզ յատուկ նպատակ՝ դու Ո՛վ իր տիրոջ օգտի մասին մաքուր է մտածում, նրա դրութիւնը Հռովմում շատ դժուար է լինում, որովհետեւ Հռովմը ցանկանում է ամեն ինչ ստանալ եւ ոչինչ տալ: Եթէ գը-

նում են այնտեղ մի բան ստանալու, ոչինչ չեն ստանում, իմէ  
եթէ հատը մի բան տանում են, այն ժամանակ բախտաւոր են  
լինում եթէ մի բան են գէթ ստանում:

## ԱՆՁՈՆԻ

Իմ վարմունքը և իմ ձարպիկութիւնը չէր, որոնց միջոցով  
Տէր, ես կատարեցի քո կամքը. Ո՞ր իմաստոնը չի գտնիլ  
Վատիկանում իր դասապետը: Հանգամանքներն այնպէս պա-  
տահեցին, որ կարողացայ օգտուել: Քեզ յարգում է Գրիգորը,  
բարեռում և օրհնում է: Պատուարժան ծերունին, որի զլութը  
ծանրաբեռնում է թագն, ուրախութեամբ մտարերում է այն  
ժամանակը, երբ նա բեզ ընդգրկած է ունեցել: Այդ մարդը, որ  
որոշում է մարդկանց, բեզ ճանաչում է և շատ գովարանում  
է: Քո հաճոյքի համար նա շատ բան արեց:

## ԱԼԳՈՆԻ

Ուրախ եմ նրա լաւ կարծիքի համար, եթէ իրաւացի է:  
Բայց դու լաւ գիտես, որ Վատիկանից ներքև նայելիս, թագա-  
սորութիւնները թւում են նրա ոտի տակ, այն էլ բաւականին  
փոքր, էլ ուր մնացին իշխաններն ու մարդիկ: Այժմ խոսո-  
վանիր թէ ամենից շատ բեզ ի՞նչն օգնեց:

## ԱՆՁՈՆԻ

Լաւ, եթէ կամենում ես—Պապի բարձր ինելքը: Նա փոքր  
բանը փոքր է տեսնում և մեծը—մեծ: Որպէս զի իշխաննե-  
րին հրամայէ, յօժարութեամբ բարեկամաբար զիշանում  
է իր զրացիններին: Այն կտոր հողը, որ քո իրաւոնքին է  
թողնում, նա լաւ գիտէ գնահատել ինչպէս և քո բարեկամու-  
թիւնը, Խոալիխան գէտը է հանգիստ լինի, նա կամենում է իր  
շուրջը բարեկամներ տեսնել խաղաղութիւն պահպանել իր սահ-  
մանների վրայ, որպէս զի բրիտանէութեան զյժը, որ նա զե-  
կավարում է, ջնջէ տաճիկներին և հերետիկոններին:

## ԻՇԽԱՆՈՒՅՆ

Կան արդեօք մարդիկ, որոնց նա ուրիշներից աւելի է հո-  
վանաւորում, որոնք նրան վստահութեամբ են մօտենում:

## ԱՆՁՈՆԻ

Միայն փորձուած մարդն է գրաւում նրա լսելիքը, գոր-  
ծունեան նրա հաւատարմութիւնը, նրա հաճոյքը, նա, որ ման-  
կութեան հասակից ծառայել է պետութեանը, այժմիշխում և  
ներգործում է այն արքունեաց վրայ, որոնց նա արդէն շատ տա-

րիներ առաջ, որպէս դեսպան, տեսել և ճանաչել է և յաճախ զեկավարել է: Աշխարհն այնպէս պարզ է գրուած նրա հայեցքի առջև, ինչպէս իր սեպհական պետութեան օգուտը: Երբ նրան գործելիս են տեսնում, գովարանում են և ուրախանում են, երբ ժամանակն յայտնում է, թէ նա հանդարտութեամբ երկար միջոց ի՞նչ է պատրաստել և ի՞նչ է կատարել Աշխարհումն չը կայ մի աւելի գեղեցիկ տեսարան, քան տեսնել մի իշխան, որ հմոռութեամբ կառավարում է, տեսնել թագաւորութիւնը ուր ամեն մէկը հպարտութեամբ հնազանդում է, ուր ամեն մէկը կարծում է, թէ ինքն իրեն է ծառայում, որովհետեւ նրան միայն օրինաւոր քան են հրամայում:

## ԱՅՈՆՈՒ

Ի՞նչ փափազով կը ցանկայի շատ մօտից մէկ անգամ տեսնել այն աշխարհը:

## ԱԼՓՈՆՍ

Ի հարկէ միասին գործելու համար, Որովհետեւ Լէօնօրէն չի կարող միմիայն նայել Շատ լաւ կը լինէր, բարեկամ, եթէ կարողանայիր երբեմնապէս խառնել քո նուրբ ձեռքերն այդ մեծ խաղի մէջ, Այնպէս չէ:

## ԼԷՕՆՈՐԻ (ԱԼՓՈՆՍԻ)

Դու կամենում ես ինձ բարկացնել, բայց քեզ չի յաջողիլ:

## ԱԼՓՈՆՍ

Անցեալ օրերի համար գեռ շատ պարտական եմ մնում քեզւ:  
ԼԷՕՆՈՐԻ:

Դէմ, լաւ, Թող ես էլ այս օրուայ համար քեզ պարտական մնամ ներիր և մի բնդհատիր հարցերս:

(ԱՆՑՈՆԻՕՐԻ)

Նա շատ բան է արել եղբօր որդիների և քեռորդիների համար:

## ԱՆՑՈՆԻ

Ոչ պակաս, այլ աւելի քան արդարացի է: Մի հզօր մարդ, որ չի կարողանում իւրայինների համար հոգալ, նաեւ ժողովրդից է պախարակում: Գրիգորը հանդարտութեամբ և չափաւորութեամբ գիտէ օգնել իւրայիններին, որոնք ծառում են պետութեանը որպէս արթուն մարդիկ և հոգացողութեամբ կատարում է իր երկու կից պարտաւորութիւնները:

## ՏԱՄՍՈ

Ալայելում է արդեօք գիտութիւնը, վայելում է արուեստ

տը, նրա հովանաւորութիւնը, Աշխատում է արդեօք նմանել հին ժամանակուայ մեծ իշխաններին,

## ԱՆՏՕՆԻ

Նա գնահատում է զիտութիւնն այնքան, որքան որ օգնում է թագաւորութիւնը կառավարելու, ազգերի հետ ծանօթացնելու, նա բարձր է դասում արուեստը, որքան զարդարող է, իր հոռովմը շըեղազարդում է և պալատներն ու տաճարները դարձնում է աշխարհի սրանչելիք։ Նրա մօտ ոչ որ չի համարձակուի անգործ մնալ, Ո՛վ կարող է, պէտք է դործի ու պէտք է ծառայի։

## Ա.ՖՈՆ

Եւ գու կարծում ես, որ մենք կարող ենք դործերը շուտով վերջացնե՛լ որ վերջապէս նրանք զանազան տեղ արգելըներ չե՞ն գնի մեր առջև։

## ԱՆՏՕՆԻ

Ես պէտք է շատ սիսալուած լինէի, եթէ իսկոյն քո անունից, մի քանի նամակներով սյդ վէճն ընդ միշտ վերջացրած չը լինէի։

## Ա.ՖՈՆ

Ուրեմն իմ կեանքի սյս օրերը գովաբանումեմ, որպէս մի բախտաւորութեան և շահաւէտութեան ժամանակ։ Սահմաններս ընդարձակուած և ապադայի համար ապահովուած եմ տեսնում։ Այդ գու կատարեցիր, առանց սրի հարուածի և անշուշտ քեզ համար բաղաբացիկան թագ վաստակեցիր։ Մեր կանայքն, առաւօտեան գեղեցիկ ժամփն, պէտք է դափնեայ տերեւներից պսակ հիւսեն և զնեն ճակատիդ։ Միւնոյն ժամանակ ծասսոն էլ հարստացրեց ինձ։ Նա տիրեց նրուսաղէմը մեզ համար և սյդ կերպի նոր ըրիստնեաներին ամաչեցրեց և ուրախ հոգովի մեծ աշխատասիրութեամբ հասաւ մի մեծագոյն և բարձրագոյն նպատակի։ Իր աշխատանքի համար դու նրան տեսնում ես պսակաւորուած։

## ԱՆՏՕՆԻ

Դու լուծեցիր հանելու կը երր եկայ, զարմանքով տեսայ երկու պսակաւորուածներին։

## ՏԵՍՍՈ

Եթէ իմ բսիստաւորութիւնս աչքերովդ տեսնում ես, կը ցանկայի, որ իմ ամօթիած հոգիս էլ նոյն աչքերովդ կարողանայիր տեսնել։

## ԱՆՑՈՒՅԹ

Ինձ շատուց յայտնի էր, որ Արքօնսը վարձատրելու մ անչափ է և գունոր ես իմանում, ինչ որ իւրաքանչեւրն իւրայիններից արդէն դիտէ:

## ԻՇԽԱԿՈՒՅԹ

Եթէ տեսնես, թէ նա ի՞նչ է կատարել, այն ժամանակ գու մեզ արդարացի և շափաւոր կը համարես Մենք պյառեղ միայն լուս, առաջին վկաներն ենք այն հաւանութեան, որն աշխարհը նրան չի մերժել և որ ապագայ տարիները տասնապատիկ աւելի կը տան:

## ԱՆՑՈՒՅԹ

Զեր միջնորդութեամբ նա ինքն համոզուած է արդէն իր փառքում: Ո՞վ կարող է երկրայիշել, այն բանում, որ դուք գիտէք գնահատել Բայց ասա, ո՞վ է դրեւ այս պատկն Արիոստի Ճակատին:

## ԼՀՈՒՅՐԵ

Այս ձեռքս:

## ԱՆՑՈՒՅԹ

Եւ լաւ է արել: Այնպէս է նրան զարդարում, որ դափանչն էլ չէր կարող զարդարել: Ինչպէս ընութիւնն իր հարուստ կուրծքը ծածկում է կանաչ, բազմազյն հանդերձով, այնպէս էլ ամեն ինչ որ կարող է մարդուն դարձնել յարգելի և սիրալիր, պարուրում է առասպելների ծաղկափթիթ զգեստով: Բաւականութիւնը փորձառութիւնը, խելքը և մոտաւոր ոյժը, ճաշակը և մաքուր զգացմունքը դէպի իսկական բարին, մտաւորաբար երևում են նրա երգերում և որպէս թէ անձամբ հանգստանում են ծաղկազարդ ծառերի տակ, ծածկուած դիւռ բաշարժ ծաղկափոշու ձիւնով, պսակաւորած վարդերով և տարօրինակ կերպով ծամածուած սիրոյ աստուածների սանձարձակ կախարդական խաղով: Այդտեղ կարկաշում է առատութեան աղբիւրը և իր մեջ ցոյց է տալիս գյոնզգոյն զարմանալի ձկներ: Հազուագիւտ թռչուններով լի է օդը, օտար հօտերով լցուած են դաշտերն ու պրակաները Խորամանկութիւնը կանաչների միջից ծածկաբար լսում է, իմաստութիւնը մի ոսկէ ամպից երբեմնապէս հնչեցնում է վսեմ դատապիճիւներ: Մինչդեռ թռում է թէ իւրագարութիւնը լաւ դաշնաւորած հնչիւններով, վայրենարար պեղում է պյառեղ, այնաեղ և այնուամեռ

Նայնիւ հաւասարապէս պահպանում է ամենազեղեցիկ ամանակը. Ո՞վ պիդ մարդու առջև համարձակութիւն ցոյց տայ, իր արիութեան համար արդէն արժանի է պատկի ներեցէք որ ոգեռուած եմ զգում ինձ, որպէս մի յափշտակուած, որ չը զիտէ ոչ ժամանակը, ոչ տեղը, ոչ էլ կարող է իր խօսքերի իմաստը կշռել, որովհետեւ այս բոլոր բանաստեղծներն, այս պըսակներն, այս գեղեցկութիւնների հապուագիւտ տօնազգեստներն ինձ անշատում են ինձանից և փոխադրում են մի օտար աշխարհ։

ԽԸՆԸՆՈՒԴԻ

Ո՞վ որ լաւ զիտէ մի արժանիք գնահատել, նա միւսն էլ կը ճանաչի. Մի անդամ դու պէտք է մազ ցոյց տաս Տասսօի Երդերի մէջ ինչ մենք զգացել ենք և ինչ որ միայն դու ես գնահատում։

Ա. ԳՈՅՆ

Արի գնանք, Անտօնիօ, Պէտք է քեզնից գեռ մի բանի բաներ հարցնեմ, որոնք ինձ շատ են հետաքրքրում։ Յետոյ, մինչև արեգակի մայր մտնելը, պէտք է կանանց պատկանես Արի, մնաք բարե։

(Անտօնիօն հետեւում է իշխանին, իսկ Տասսօն տիկնանց)։

Թարգմ. բժ. Լեռն Տիգրանեանց

(Կը շարունակուի)

